ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/35

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Աբելյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 264.110.1093364)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2020թ. թիվ 26/26-1/1079-2020 գրությամբ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարության 29.01.2020թ. թիվ 19.2/1666-2020 գրության հիման վրա, 30.01.2020թ. թիվ 26/26-1/1079-2020 գրությամբ նախաձեռնել է «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Փեյփր Հաուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկի հայտ է ներկայացվել Armeps պետական գնումների կայքում Էլեկտրոնային եղանակով 2019թ. նոյեմբերի 20-ի ՀՀ արդարադատության նախարարության N ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 ծածկագրով ընթացակարգի գնանշման հարցման ընթացակարգին, ապա ճանաչվել է հաղթող մասնակից: 2020թ. հունվարի 9-ին ստացել է ՀՀ արդարադատության նախարարության հետ պայմանագիր կնքելու առաջարկն ու նախագիծը:

Պայմանագրի կնքման վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. հունվարի 23-ը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ի կողմից ստորագրված և կնքված «Հայփոստ» ՓԲԸ մուտք է արվել 2020թ. հունվարի 23-ին (կից ներկայացնում եմ «Հայփոստ» ՓԲԸ կողմից տրամադրված կտրոնի պատճեն):

ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընկերությունը խնդրել է դադարեցնել «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը, քանի որ վերոնշյալ պայմանագրի կնքման վերաբերյալ մեր ընկերության կողմից չի խախտվել որևէ կետ և ժամկետների սահմաններում ներկայացրել է պայմանագիրը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/35 ընթացակարգի շրջանակներում 07.02.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ արդարադատության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.01.2020թ. թիվ 19.2/1666-2020 գրությամբ

հայտնել է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2019 թվականի նոյեմբերի 20-ին գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպված «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գրենական ապրանքների և քարտրիջների գնման գործընթացի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից 33-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է հայտարարվել «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն, որին անգործության ժամկետը լրանալուց հետո, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 2020 թվականի հունվարի 9-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը և ստորագրված պայմանագիրը ներկայացնելու վերջնաժամկետ սահմանվել 2020 թվականի հունվարի 23-ը, ժամը 18:00-ն: Սակայն, «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն նշյալ ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը և գնահատող հանձնաժողովի որոշմամբ զրկվել պայմանագիր կնքելու իրավունքից:

ՀՀ արդարադատության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/35 ընթացակարգի շրջանակներում 07.02.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/35 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/35 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արդարադատության նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի 33-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին 09.01.2020թ. ծանուցվել և ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը:

3. Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, այն հիմքով, որ վերջինս «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2020թ. թիվ 26/26-1/1079-2020 գրությունը, ՀՀ արդարադատության նախարարության 29.01.2020թ. թիվ 19.2/1666-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ի 05.01.2020թ. դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի 33-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին 09.01.2020թ. ծանուցվել և ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, այն հիմքով, որ վերջինս «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը և 33-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ն:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ վերջինս սահմանված ժամկետում՝ պայմանագիր կնքելու առաջարկը 09.01.2020թ. ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրված և կնքված պայմանագիրը 23.01.2020թ. հանձնել է «Հայփոստ» ՓԲԸ-ին: Ընկերությունը կցել է «Հայփոստ» ՓԲԸ-ի N 5 առաքանու անդորրագիր, որի համաձայն՝ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն 23.01.2020թ. նամակ է ուղարկել ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8 հասցեում գտնվող ՀՀ արդարադատության նախարարություն:

Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրել 31.01.2020թ. ՀՀ արդարադատության նախարարություն մուտքագրված Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությանը կցել է նաև փոստային ծրարը, որի վրա առկա է 23.01.2020թ. նշումով «Հայփոստ» ՓԲԸ-ի կնիքը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **<u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>**, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկն ուղարկվել է 09.01.2020թ.: Ուսումնասիրելով գործում առկա նյութերն արձանագրում եմ, որ Ընկերությունը Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետում՝ 23.01.2020թ. կապի կազմակերպությանը, այն է՝ «Հայփոստ» ՓԲԸ-ին, հանձնել է ստորագրված պայմանագիրը, որը սակայն Պատվիրատուի կողմից ստացվել է սահմանված ժամկետն ավարտվելուց հետո: Նման պայմաններում, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը որպես ընտրված մասնակից չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2020թ. թիվ 26/26-1/1079-2020 գրությամբ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**